ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/66

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ

Մասնակից՝ «Ջիարջի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, դեղորայքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3241-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի 26.02.2021թ.-ի թիվ 19 գրության հիման վրա, 05.03.2021թ.-ին «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 05.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 05.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/66 համարի ծածկագիրը:

17.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն 26.02.2021թ.-ի թիվ 19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Համաձայն «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված N «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) N 1 հավելվածի և Պայմանագրի 2.4 կետի ենթակետերով նախատեսված կարգի «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն պարտավոր է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքներ՝ պահանջի

դեպքում փրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր և հավաստագրեր, սակայն «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ղեղորայքի տեխնիկական բնութագրերում, արտադրողի անվանումներում առկա են անհամապատասխանություններ պայմանագրի N 1 հավելվածի նկատմամբ, ինչպես նաև բացակայում է չգրանցված դեղորայքի մասով ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագիրը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2020թ. դեկտեմբերի 3-ի N 1933-Ն որոշման: Մասնակցին ընձեռնվել է հնարավորություն շտկելու վերոնշյալ անհամապատասխանությունները, սակայն մասնակցի կողմից շտկումներ չի կատարվել սահմանված ժամկետում:

Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջները՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն 2021 թվականի փետրվարի 24-ից միակողմանի մասնակի լուծում է 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված N «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պայմանագիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետի խնդրում ենք մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Ջիարջի» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի կողմից 19.03.2021թ.-ին Բողոքներ քննող անձի էլ. հասցեին ուղարկված գրության համաձայն՝

«Հայտնում ենք, որ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ին պատշաճ կարգով ծանուցվել է ՍՑ-ԼՕ-2021/66 ընթացակարգի քննության նիստի օրվա, վայրի և ժամի մասին, սակայն մեր ընկերության լիազորված անձը չի կարողացել ներկա գտնվել նիստին հարգելի պատճառով և նիստը հետևել ենք համապատասխան հղումով:

Ելնելով վերոգրյալից «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն ներկայացնում է իր դիրքորոշումը 17.03.2021թ. ՍՑ-ԼՕ-2021/66 ընթացակարգի քննության նիստի վերաբերյալ:

«Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի կողմից 11.01.2021թ հայտարարված «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն: Մասնակցի հայտի N 1.1 հավելվածի (հավելվածը կցվում է) արտադրողի անվանումը սյունակում «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես արտադրողի անվանման փոխարեն նշված է եղել ծագման երկիրը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետը՝ նիստը կասեցվել է և նույն օրը սույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակցին է ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է N 1.1 հավելվածում առկա անհամապատասխանությունները (շտկված հավելվածը կցվում է), միևնույն ժամանակ փոխելով դեղորայքի անվանումները փոխազդող նյութերով, որոնք գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում և պահանջում են ներմուծման հավաստագիր ՀՀ Կառավորության 2020թ դեկտեմբերի 3-ի N 1933-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով վերը նշված որոշման 2.3 կետը. «2.3. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր՝ ներմուծման հավաստագրի առկայության դեպքում», հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատել է բավարար և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հետ փետրվարի 12-ին կնքվել է «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պայմանագիր:

Մատակարարման փուլում պատասխանատու ստորաբաժանման կողմից արձանագրվել է մատակարարված դեղորայքում անհամապատասխանություններ պայմանագրի N 1 հավելվածի նկատմամբ.

1. պայմանագրով սահմանված մետրոնիդազոլի փոխարեն մատակարարվել է բացիմեկս, սակայն հաշիվ ապրանքագրով (կցվում է) նշված է, որ մատակարարվել է մետրոնիդազոլ ցիտիկոլին (պահանջի դեպքում կտրամադրվի մատակարարված դեղորայքի օրինակը),

2. ցեֆտրիքասոն, վինպոցետին, մելդոնիում, դիկլոֆենակ, ֆամոտիդին, ցիտիկոլին, մետրոնիդազոլ չգրանցված դեղորայքը մատակարարվել է ներմուծման հավաստագրի առկայության բացակայությամբ,

3. մելդոնիում և ցիտիկոլին դեղորայքները ըստ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերի պետք է մատակարարվեին ապակե սրվակներով, սակայն մատակարարվել են պլաստմասե տարաներով,

4. ցիտիկոլին դեղորայքի փոխարեն մատակարարվել է էնցետրոլ սակայն հաշիվ ապրանքագրով (կցվում է) նշված է, որ մատակարարվել է ցիտիկոլին (պահանջի դեպքում կտրամադրվի մատակարարված դեղորայքի օրինակը):

Պատվիրատուի կողմից ներմուծման հավաստագրի պահանջի դեպքում մասնակիցը ներկայացրել է հավաստագիր (հավաստագիրը կցվում է) ոչ բոլոր չգրանցված դեղորայքի մասով, բացի այդ հավաստագիրը տրված է ոչ թե «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02835324), այլ «Ջեփտա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02691981), որը 24.07.2019թ.-24.07.2021թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի կողմից փետրվարի 11-ին դուրս գրված հաշիվ ապրանքագրի համաձայն (կցվում է) մասնակիցը ոչ պատշաճ կարգով իրականացրել է մատակարարում: Պատասխանատու ստորաբաժանման պահանջով բազմիցս առաջարկվել է շտկել վերը նշված անհամապատասխանությունները, սակայն մասնակցի կողմից ոչ մի դրական արձագանք չի ստացվել:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է եղել փետրվարի 26-ին միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվել է 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Ելնելով վերոգրյալից՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն ակնկալում է ՍՑ-ԼՕ-2021/66 ընթացակարգի քննության արդյունքում կայացրած ազնիվ և արդար որոշում:»:

3. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 05.03.2021թ.-ի գրությամբ դիմել է «Ջիարջի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3241-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով 17.03.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/66 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 12.02.2021թ.-ին կնքվել է թիվ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված մինչև 25.12.2021թ.-ը: Ընդ որում առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում է առնվազն 20 օրացուցային օր /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացում:

iii. Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու

օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

iv. «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 26.02.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 18 ծանուցման համաձայն՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ջիարջի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված թիվ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածի և Պայմանագրի 2.4 կետի ենթակետերով նախատեսված կարգի «Ջիարջի» ՍՊԸ-ն պարտավոր է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքներ՝ պահանջի դեպքում տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր և հավաստագրեր, սակայն վերջինիս կողմից մատակարարված 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ղեղորայքի տեխնիկական բնութագրերում, արտադրողի անվանումներում առկա են անհամապատասխանություններ պայմանագրի թիվ 1 հավելվածի նկատմամբ, ինչպես նաև բացակայում է չգրանցված դեղորայքի մասով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագիրը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2020թ. դեկտեմբերի 3-ի N 1933-Ն որոշման:

Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջները՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն 2021 թվականի փետրվարի 24-ից միակողմանի մասնակի լուծել 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված թիվ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3241-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ

ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, գնորդն իրավունք ունի՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով

առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԾաղկահովիտիԱԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 12.02.2021թ.-ին կնքված թիվ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետի սկիզբ է համարվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված մինչև 25.12.2021թ.-ը: Ընդ որում առաջին փուլի մատակարարման ժամկետը սահմանվում է առնվազն 20 օրացուցային օր /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացում: Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է: Սակայն «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 26.02.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 18 ծանուցման համաձայն՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված թիվ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի թիվ 1 հավելվածի և Պայմանագրի 2.4 կետի ենթակետերով նախատեսված կարգի «Ջիարջի» ՍՊԸ-ն պարտավոր է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքներ՝ պահանջի դեպքում տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր և հավաստագրեր, սակայն վերջինիս կողմից մատակարարված 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ղեղորայքի տեխնիկական բնութագրերում, արտադրողի անվանումներում առկա են անհամապատասխանություններ պայմանագրի թիվ 1 հավելվածի նկատմամբ, ինչպես նաև բացակայում է չգրանցված դեղորայքի մասով ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված ներմուծման հավաստագիրը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2020թ. դեկտեմբերի 3-ի N 1933-Ն որոշման:

Հետևաբար, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 3, 9, 15, 18, 19, 24 և 27-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջները՝ «Ծաղկահովիտի ԱԿ» ՓԲԸ-ն 2021 թվականի փետրվարի 24-ից միակողմանի մասնակի լուծել է 2021 թվականի փետրվարի 12-ին կնքված թիվ «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով պայմանագիրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, հիմք ընդունելով Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով և նույն պայմանագրի 8.13 կետով սահմանված դրույթները, Մասնակիցը կարող է ապրանքները մատակարարել Պատվիրատուին միայն այն ժամանակ, երբ Պայմանագրով նախատեսված

ապրանքների գնման համար կնախատեսվեն ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կկնքվի համաձայնագիր, որից հետո միայն Պատվիրատուն իրավունք ունի ապրանքների մատակարարման պատվեր ուղարկել Մասնակցին:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ տվյալ պարագայում Պատվիրատուի կողմից Մասնակցին համաձայնագիր կնքելու առաջարկ չի ներկայացվել, որպիսի պայմաններում համաձայնագրի բացակայության պայմաններում վերջինս իրավունք չուներ ապրանքների մատակարարման պատվեր ուղարկել Մասնակցին, իսկ Մասնակիցը իրավունք չուներ կատարալ մատակարարումներ:

Ուստի նման պայմաններում չի կարող առաջանա Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջների խախտում, քանի որ առաջին հերթին Մասնակիցը պետք է իրավունք ունենար ապրանք մատակարարելու, որից հետո միայն Պատվիրատուն իրավասու կլիներ արձանագրել վերջինիս կողմից անպատշաճ որակի ապրանքի մատակարարման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած

պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2021թ. թիվ 26/26-1/3241-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/66 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**